«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021-2022 ուսումնական տարում քոլեջ են ընդունվել առկա ուսուցմամբ բոլոր չորս մասնագիտությունների գծով դիմորդներ.

1. «Դեղագործություն» մասնագիտության հիմնական կրթությամբ 20 ուսանող, միջնակարգով՝ 10 ուսանող:
2. «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության հիմնական կրթությամբ՝ 6, միջնակարգ կրթությամբ չեն դիմել:
3. «Քույրական գործ» մասնագիտության հիմնական կրթությամբ 4 ուսանող, միջնակարգ կրթությամբ՝ 1-ը:
4. «Մանկաբարձական գործ» մասնագիտության հիմնական կրթությամբ չեն դիմել, միջնակարգ կրթությամբ 1-ը:

Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրման կապակցությամբ ուսանողի իրավունքը վերականգնել է 1 ուսանող «Դեղագործություն» մասնագիտության հիմնական կրթությամբ 3-րդ կուրսում:

Ղեկավարվելով ՀՀ ԿԳ նախարարի 2011թ.դեկտեմբերի 5-ի №1278-Ն հրամանի ներքոգրյալ ուսանողները վերականգնել են ուսանողական իրավունքները հետևյալ մասնագիտություններով:

1. «Դեղագործություն»- հիմնական կրթությամբ 2-րդ կուրս-2ուսանող,
   միջնակարգ կրթությամբ 2-րդ կուրս-1ուսանող
2. «Ատամնատեխնիկական գործ»- միջնակարգ կրթությամբ 1-ին կուրս-1ուսանող
3. «Մանկաբարձական գործ»- միջնակարգ կրթությամբ 2-րդ կուրս-1ուսանող
4. «Քույրական գործ»- հիմնական կրթությամբ 2-րդ կուրս-1ուսանող,
   միջնակարգ կրթությամբ 2-րդ կուրս-1 ուսանող

Հիմք ընդունելով «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու» կարգը հաջորդական կրթություն ստանալու նպատակով ներքոգրյալ ուսանողները ընդունվել են նշված մասնագիտություններով:

1. «Քույրական գործ»- բարձրագույն կրթության հիմքով -2 ուսանող
2. «Մանկաբարձական գործ»-միջին մասնագիտական կրթության հիմքով -1 ուսանող

Պարտադիր զինվորական ծառայության է մեկնել «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության միջնակարգ կրթությամբ 2-րդ կուրսի 1 ուսանող և նույն մասնագիտությամբ հիմնական կրթությամբ ևս 1-ը:

Ուսանողական իրավունքից ազատվել են հետևյալ ուսանողները.

1. «Ատամնատեխնիկական գործ» - հիմնական կրթություն 2-րդ կուրս-1ուսանող,
   հիմնական կրթություն 3-րդ կուրս-1ուսանող,
   հիմնական կրթություն 1-ին կուրս-1ուսանող:

2. «Դեղագործություն»- հիմնական կրթությամբ 1-ին կուրս- 1ուսանող:

2021-2022 ուստարին սկսվեց ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի, նախապես վերանայված ուսումնական պլաններով հիմք ընդունելով ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից հաստատված վերանայված միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչ-ները, պլանները, մոդուլային ծրագրերը: Ուսումնական գործընթացը լիարժեք իրականացնելու համար ժամանակին պատրաստ են եղել բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, ուսումնական խմբերը, ուսումնական մատյանները, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալի, օրացույցային-թեմատիկ պլանների և այլ ձևաթղթերը: Կազմվել և ժամանակին պատրաստ են եղել բոլոր մասնագիտությունների դասացուցակները, միջանկյալ ստուգարքների, քննությունների, առարկայական պարտքերի մարման և երկու կիսամյակների պրակտիկայի ժամանակա-ցույցները:

Կուրսերը բաշխվել են հետևյալ կերպ.

Հիմնական ընդհանուր կրթություն I կուրս-101,102 խումբ:

«Դեղագործություն» - II կուրս (II^{ա} խումբ հիմնական կրթությամբ և I^{բ} խումբ միջնակարգ կրթությամբ):

«Ատամնատեխնիկական գործ» -II կուրս հիմնական կրթությամբ:

«Քույրական գործ» - II կուրս (II^{ա} խումբ հիմնական կրթությամբ և I^{բ} խումբ միջնակարգ կրթությամբ կուրս):

«Քույրական գործ»- II կուրս միջնակարգ կրթությամբ:

«Մանկաբարձական գործ»- II կուրս միջնակարգ կրթությամբ:

«Մանկաբարձական գործ»- I կուրս միջնակարգ կրթությամբ:

Սեպտեմբեր 1-ին ուսանողներին է տրամադրվել ուսանողական գրքույկներն ու ուսանողական տոմսերը:

Քոլեջի կողմից ձեռք են բերվել ախտահանման և սանիտարահիգիենիկ նյութեր:

Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան